«Պետք է Արցախում ստեղծել անվտանգության գոտի, միջազգային հսկողությամբ»

Վերջերս Հայաստանում էր գտնվում Լենինգրադի Արցախում մարդու իրավունքների պաշտպանության կոմիտեի նախագահության անդամ, մաքեմատիկոս Կոնստանտին Վոռվոդսկին: Նա այցելեց մեր խմբագրություն, ուր պատասխանեց մեր թղթակցի մի շարք հարցերին:

- Պրն. Վոռվոդսկի, խնդրում եմ պատմեք ձեր կոմիտեի մասին:

- Մեր կոմիտեի նախագահությունը կազմված է 3 հոգուց, որոնցից մեկը պրն. Կարեն Յուզբաշյանն է՝ Հայաստանի Գերագույն խորհրդի պատգամավոր, արեւելագետ, մյուսը գրող, հրապարակախոս Իգոր Քաբանովն է, նույնպես ազգությամբ հայ, եւ ես: Մեր կոմիտեն միջազգային կազմակերպության մասնաճյուղ է: Կոմիտեի արտասահմանյան անդամները դեռեւս շատ փոքրաթիվ են, հիմնականում Ֆրանսիայում: Դժբախտաբար, նրանց հետ կապերն առայժմ թույլ են, բայց մենք ջանում ենք ամրապնդել դրանք եւ տեղեկություններ ենք ուղարկում Յուրիխ, Վիեննա, Օսլո եւ արտասահմանյան այլ քաղաքներ: Մեր կոմիտեի համար մեծ գործ է կատարում Սորբոնի համալսարանի պրոֆեսոր, հայագետ Ժան-Պիեր Մահեն: Մենք ընկել ենք աշխատել 1990-ի հունիսից: Կոմիտեի անդամներից բացի ունենք ռուս մտավորականության համակիր շրջանակ, որը համագործակցում է մեզ հետ: Դրանց թվում է նաեւ վերջերս Սանկտ-Պետերբուրգում հիմնադրված «Բալթիկայի պաշտպանության կոմիտեն»: Մեզ օգնություն է ցուցաբերում նաեւ Լենխորհրդի պատգամավորների մի խումբ, որոնք վերջերս եղան Հայաստանում եւ Լենխորհրդի առաջիկա նստաշրջանում օրակարգի հարց են դարձնելու Արցախում, Սահմանյանի շրջանում ու սահմանային գոտում կատարվող իրադարձությունները:

Մեզ հետ ակտիվորեն համագործակցում են նաեւ լրագրեր՝ *«Մտենաս»*, *«Նեզավիսիմայա Գազետա»* եւ *«Լիտերատուրը»*:

- Պրն. Վոռվոդսկի, ինչո՞ւ դուք հետաքրքրվեցիք Արցախի հարցով:

- 1988-ի մարտի սկզբներին ես Հայաստանում էի, մոտիկից ծանոթացա այդ օրերի իրադարձություններին եւ շատ փաստեր իմացա Ղարաբաղի մասին: Ես նյութեր հավաքեցի, որոնք առանձին գրքույկներով տպագրվեցին: Փաստորեն դա ռուս մարդու կողմից ներկայացված առաջին ճշգրիտ լրատվությունն էր Արցախի հարցի վերաբերյալ: Ինձ թվում էր, որ դեպքերի իրական նկարագրությունն անջնջելի տպավորություն կթողնի եւ կցնցի ռուս հասարակությանը, սակայն ի զարմանս ինձ, այդ ամբողջը շատ սառնորեն ընդունվեց մեծ մասի կողմից: Եվ դա այդպես էր մինչեւ վերջին ամիսները:

Ես վերջերս հանդիպեցի գրողների «Ապրիլ» կազմակերպության անդամ պրն. Նույկինի եւ նրա կնոջ հետ, որոնք Թիմուր Գայդարի, Չերնիչենկոյի եւ Օսկոցկու հետ փորձել էին գնալ Արցախ, սակայն նրանց օդանավակայանից դուրս չէին թողել:

Երկար համառելուց հետո նրանցից տոսկ երկուսին՝ դեր-ծովակալ Գայդարին եւ Քրիստոնեական կուսակցության նախագահ Չերնիչենկոյին էր հաջողվել լինել Ստեփանակերտում: Սակայն այն ամենը, ինչ նրանք տեսել էին օդանավակայանում, արդեն իսկ բավական էր, որպեսզի հասկանային կատարվող իրողությունը: Նրանց ուղեւորությունն իզուր չանցավ: Մոսկովյան մտավորականության այդ ներկայացուցիչները վերադառնալով՝ ստեղծեցին *«Կրիկ»* (Ռուս մտավորականության Ղարաբաղ կոմիտե) կազմակերպությունը, որը մեր համախոհն է: Այդ կազմակերպության անդամներից են ռուս ընթերցողին հաջածանոթ գրողներ, հրապարակախոսներ՝ Գոզմանը, Սելյունինը, Բուրկովան, Գորդինը, Վոսկոբոյնիկովը եւ ուրիշներ: Նրանց ջանքերի, մասնավորապես Ինեսա Բուրկովայի ելույթի շնորհիվ Մեծ Բրիտանիայի Լորդերի պալատի փոխխոսնակ բարոնուհի Քեռոլայն Քոկսը եղավ Արցախում:

- Պրն. Վոռվոդսկի, Հայաստանում կա՞ն կազմակերպություններ, որոնց հետ դուք համագործակցում եք:

- Այո, մենք փորձում ենք այդ կապերն ընդլայնել եւ Հայաստանից տեղեկատվություն ենք ստանում ՀՀԴ-ի լրատու կենտրոնից:

- Ձեր հիմնական աշխատանքը լրատվության միջոցով հասարակական կարծիք ընդլայնե՞լն է:

- Այո, առայժմ դա շատ կարեւոր է, իսկ հետագայում մեր մոտակա նպատակն է ազդել Ռուսաստանի Գերագույն խորհրդի վրա, որը, ելնելով իր շահերից, բարելավի արցախահայերի վիճակը: Սա այնուամենայնիվ վերջնական լուծում չէ, որովհետեւ կենտրոնի վարած քաղաքականությունն անխուսափելի է դարձնում ռազմական առճակատումը:

Կարեւոր է նաեւ ստեղծել Արցախում անվտանգության գոտի միջազգային հսկողությամբ: Այս գաղափարն իրականացնելու համար սփյուռքը նույնպես կատարելիք գործեր ունի արեւմտյան երկրների պետական համակարգերում:

- Պրն. Վոռվոդսկի, ձեր կարծիքով արցախյան հարցի լուծման համար ո՞ր ճանապարհն է ավելի նպատակահարմար՝ Հայաստանի անկախությու՞նը, թե Միութենական պայմանագրի ստորագրումը:

- Ամեն դեպքում, Արցախյան հարցը դժվար լուծելի է եւ իմ կարծիքով Հայաստանը պետք է գնա անկախության ճանապարհով, քանի որ փորձը ցույց տվեց, որ Գորբաչովյան վերակառուցման հավատով լցված ցուցարարների արդար պահանջը կենտրոնը չուզեց հասկանալ:

Իսկ ինչ վերաբերվում է Միութենական պայմանագրին, դա ոչ մի հանրաքեւության եւ ընդհանրապես ոչ ոքի պետք չէ, բացի պրն. Գորբաչովից, որպես կայունության երաշխիք խորհրդային երկրի անկայունության ու փլուզման վերաբերյալ արեւմտյան պետությունների ունեցած կասկածները փարատելու համար:

Պատրաստեց վարպետ
ԴԻԱՆԱ ՔՆԼՆՍՅԱՆԸ